



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ
«05» 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 58

Ձեռնարկողը՝

<<Սպայկա>> ՍՊԸ
Երևան, Արշակունյաց 252

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Արտաշատի խճուղի 49/6 հասցեում 110/6-6ԿՎ ենթակայանի և 110/6-6 ԿՎ ենթակայանին սնող 110 օղային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈՒՄԿ-ի տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 98

<< 05 >> 12 2018թ.

Երևան քաղաքի Արտաշատի խճուղի 49/6 հասցեում 110/6-6ԿՎ ենթակայանի և 110/6-6 ԿՎ ենթակայանին սնող 110 օդային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝

«Սպայկա» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր

Գործունեության կատեգորիա՝ «Բ»

Տեղադրման վայրը՝

ք. Երևան, Շենգավիթ, Արտաշատի խճուղի 49/6

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի հարավային մասում՝ արդյունաբերական շրջանում: Մոտակա բնակելի <<Էրեբունի>> և <<Ներքին Շենգավիթ>> թաղամասերը գտնվում են մոտ 2000մ հեռավորության վրա:

Օդային գիծն անցնելու է ճանապարհի և Երևան ԶԷԿ-ի եզրագծով:

Նախագծով նախատեսվում է՝ 40000կՎԱ հզորության 100/6-6ԿՎ լարման, երկու եռաֆազ երկփաթույթ ուժային տրանսֆորմատորների տեղադրում:

Նախատեսվում է 110կՎ լարման սարքավորումներ, 6կՎ պահարաններ K-26 տիպի յուղային անջատիչներ, ընդունելով (N6-2 սխեման) երկու անջատիչով սեկցիավորված հաղորդադրողային համակարգ:

Ուժային տրանսֆորմատորի 6կՎ-ի կապը ՓԲՍ-ում տեղադրված 6կՎ պահարանների հետ իրականացվում է հաղորդադրողային կամրջակի և մալուխի միջոցով: ԲԲՍ-110կՎ հաղորդաձողավորումը նախատեսված է 150/24 տիպի հաղորդալարով: Ենթակայանի օպերատիվ հոսանքը հաստատուն է, որի համար տեղադրվելու է ԱՄՕՏ տիպի սարքավորում, իսկ սեփական կարիքների շրջանների սնուցման համար ըստ հաշվարկների, տեղադրվելու է երկու հատ ԿՄ-53կՎԱ հզորության 6/0.4-0.23կՎ տրանսֆորմատոր և տեղադրվում է 6կՎ պահարանի մեջ 0.4կՎ-ի մուտքը փոփոխական հոսանքի մուտքի պանելին կատարվում է АВВГ-1000 4x50մմ² կտրվածքի

մալուխով: Ուժային և հսկիչ մալուխների մոտեցումը սարքավորումներին 110կՎ ՔՔՄ-ում նախատեսվում է 600x800մմ և 800x900մմ անցուղիներով, իսկ ԵԿԿ-ում բոլոր պանելների տակ նախատեսվում է 400x400մմ անցուղիներ: Կայծակի ուղիղ հարվածներից շանթապաշտպանությունը իրականացվում է 110կՎ պորտալների վրա տեղադրված 5մ երկարության ձողերի միջոցով: Ըստ հաշվարկների արդյունքների բոլոր սարքավորումները 110կՎ են և հաղորդալարերը ընդգրկված են այդ շանթարգելներով ստեղծված շանթապաշտպանիչ գոտում, ԵԿԿ-ի և ՓՔՄ-ի շենքը նույնպես ընդգրկված է այդ շանթապաշտպանիչ գոտում: Պորտալի բարձրությունը կազմում է 19.35մ: Գծերից եկող կոմուտացիոն գերլարումներից պաշտպանությունը իրականացվում է ուժային տրանսֆորմատորի մոտ և հավաքական դողերի վրա տեղադրվող գերլարման սահմանափակիչներով:

Նախատեսված է 110/6-6կՎ ենթակայանի հողանցում:

Նախագծով նախատեսվում է 110կՎ ՔՔՄ-ի արտաքին լուսավորություն: Լուսավորության ցանցի լարումը 380/220Վ է(ֆազա զրո), որը սնվում է փոփոխական հոսանքի սեփական կարիքների պանելից: Վթարային լուսավորության ցանցը իրականացվում է ВВГнг-660 3x2.5մմ² կտրվածքի մալուխով: Շենքի մուտքի մոտ նախատեսվում է տեղադրել լուսավորության ցայտանթափանց, լուսատուներ “LED” տիպի: Անջատիչները տեղադրվելու են գետնից 1.5մ բարձրության վրա, վարդակները՝ 0.8մ, իսկ լուսավորման վահանը՝ 1.5մ: ԵԿԿ-ում և 6կՎ ՓՔՄ-ում նախատեսվում է տեղադրել օդափոխության, ջեռուցման, օդորակիչ սարքեր, ինչպես նաև հակահրդեհային ազդանշանային համակարգեր:

<<Սպայկա>> ՍՊԸ համար նոր կառուցվող 110/6-6կՎ ԵԿ-ի սնումը իրականացվելու է երկշղթա օդային գծով՝ 110կՎ երկշղթա «Նաիրի 1;2» ՕԳ-ից ճյուղավորման սխեմայով:

Ուղեգծի երկարությունը ճյուղավորման հենարանից մինչև ԵԿ-ի պորտալները կազմում է 1.1կմ: Նախատեսված է ընդհանուր թվով 5 հատ երկշղթա հենարանի տեղադրում:

Ուղեգիծը համաձայնեցված է շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Նախատեսված է «Նաիրի 1;2» ՕԳ-ի N4 Ս6M հենարանի տեղում տեղադրել նոր ՍС110-8+9 տիպի ճյուղավորման հենարան՝ նոր հիմքերի վրա:


Ուղեգծում բացարձակ նիշերը տատանվում են 924-937մ սահմաններում:

Տեղադրվող հենարանների հողակցումը նախատեսված է ճառագայթային սխեմայով՝ 12մմ տրամագծով կլոր պողպատով:

ՕԳ-ում նախատեսված է AC150/24 տիպի հաղորդալարի մոնտաժում: Օդային գծի անցկացման համար օգտագործվելու են ինքնակիր մեկուսացված հաղորդալարեր (ԻՄՀ), որոնք մեկուսիչ թաղանթով և բարձր անվտանգությամբ օժտված հաղորդալարեր են և հիմնականում օգտագործվում են բնակելի գոտիներում օդային գծերի անցկացման համար:

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման համար ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում կհիմնվի շինհրապարակ:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:



Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա 110/6-6կՎ ենթակայանի և 110/6-6 կՎ ԵԿ-ի սնող 110 ՕԳ-ի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է 4.8մ³ ծավալով և կենցաղային աղբը՝ 15-20կգ: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, համաձայն աշխատանքային նախագծի 12.8կմ հեռավորության վրա: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Օդային գծերի և ենթակայանի կառուցման համար իրականացվում է շինարարություն, որը ներառում է հողային աշխատանքներ, շինարարական տեխնիկայի շահագործում, նյութերի օգտագործում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո օդային գծերը գործարկվում են և շահագործման փուլում նույնպես առաջանում է որոշակի ճնշում շրջակա միջավայրի վրա:

Շինարարության հիմնական փուլն ընդգրկում է.

- գրունտների մշակում,
- գրունտների փխրեցում,
- շինարարական աշխատանքներ,
- մոնտաժային աշխատանքներ :

Բարձրավոլտ էլեկտրահաղորդման ՕԳ-ի և ենթակայանի շինարարության ժամանակ նկատվում է հողածածկի խախտում, տեղի է ունենում մթնոլորտային օդի աղտոտում շինարարական մեքենաների և մեխանիզմների աշխատանքից և փոշուց, առաջանում է աղմուկի լրացուցիչ ազդեցություն:

Բարձրավոլտ էլեկտրահաղորդման ՕԳ-ի շինարարությունը բացասական ազդեցություն է գործում շրջակա միջավայրի վրա: Այդ պատճառով շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն բացասական ազդեցության մեղմման և վերացման, բնական պաշարների ուղղակի օգտագործման համար շինարարության ընթացքում նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ:

Սակայն շինարարության փուլերում շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա ազդեցությունը կրում է ժամանակավոր բնույթ և աշխատանքային հրահանգների ճիշտ պահպանման դեպքում հնարավոր է ազդեցությունը հասցնել նվազագույնի:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հիմնականում պայմանավորված է հողային զանգվածների տեղափոխումով, շինարարական տեխնիկայի, ավտոտրանսպորտի շահագործման և այլ շինարարական աշխատանքներով:

ՕԳ և ենթակայանի շինարարության ընթացքում ջրամատակարարումը կատարվում է աշխատողներին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, հողային ծանգվածը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Հաշվետվությունում ներառված են նաև մշտադիտարկումների իրականացման ծրագիրը:

ՕԳ և ենթակայանի շինարարության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցման միջոցառումներ:



Եզրահանգում

Ներկայացված գնահատման հաշվետվությունով նախատեսված աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցմանն ուղղված բավարար միջոցառումներ՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների վերաբերյալ:

Այսպիսով հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Սպայկա» ՍՊԸ-ին պատկանող գոյություն ունեցող արտադրական տարածքում, ուստի իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա կլինի թույլատրելի նորմայի սահմաններում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, հող և այլն) մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

2. Առաջացած թափոնները (շինադր, կենցաղային աղբ) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել « օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սպայկա» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Արտաշատի խճուղի 49/6 հասցեում 110/6-6ԿՎ ենթակայանի և 110/6-6 ԿՎ ենթակայանին սնող 110 օդային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Մասնագետ



Ա. Դոնոյան

Զ. Զուռնայան